



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 2 ՄԱՅԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 15

Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՁԷՆ ՏԷՐԸ

Տէր, ո՛վ արժանի պիտի ըլլայ քաճարիդ մէջ ըլլալու,
ո՛վ արժանի պիտի ըլլայ սուրբ լեռանդ վրայ բնակելու:
Ան՝ որ անբիծ կեանք մը կ'ապրի,
արդարութիւն կը գործէ,
եւ միայն ճշմարտութիւնը կը խորհի ու կը խօսի.
որ չի գրպարտեր բնաւ, իր ընկերոջ չարիք չ'ըներ,
եւ դրացին չի նախապեր:
Ան՝ որ կ'արհամարհէ Աստուծմէ մերժուածները,
մինչ կը պապուէ աստուածավախ մարդիկը:
Որ յանձն կ'առնէ իր երդումը յարգելով
վնաս կրել, քան թէ իր խօսքը դրժել:
Ան՝ որ իր դրամը փոկոսով չի փար,
եւ կաշառքի փոխարէն անմեղին դէմ վկայութիւն չի փար:
Այսպէս ապրող երբեք պիտի չսասանի:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆ ԵՐՈՒՄՆ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 11:1-16)



ԱՅՐ ԵՒ ԿԻՆ՝ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՏԵՆ (11:2-16)

Պօղոս Առաքեալ կ'եզրակացնէ ու կարեւորութեամբ կ'ընդգծէ, թէ իւրաքաչնիւր հաւաքացեալի կոչումն է ապրելու այնպիսի կեանք մը, որ արքայացումը ըլլայ Քրիստոսի կեանքին: Ինք հետեւաբար ասպրումաբանութիւն մը չքարոզեց, այլ որքան կեանքի մը ու ապրելակերպի ձեւ մը, որ նման է Քրիստոսի կեանքին:

Տակաւին, Առաքեալին ամբողջ նպատակն է առաջնորդել հաւաքացեալները ապրելու եւ ծառայելու Աստուծոյ «պարկեշտութեամբ եւ անզբաղ մտքով», «զգոյշ ըլլալու որ ռեւէ մէկուն գայթակղութեան պարճառ չըլլան»:

Ահա այս սկզբունքներուն լոյսին փակ, Պօղոս Առաքեալ կ'անցնի մէկ այլ ուրիշ հարցի մը: Սակայն, նախքան այդ հարցին անցնիլը նախ կը գովէ զիրենք այն բանին համար, որ կը յիշեն իր սորվեցուցածները, ու մանաւանդ՝ աւանդուածներն ալ կը պահեն: Յիշել եւ պահել, կը նշանակէ գործադրել, եւ ոչ թէ պարզապէս մտքի կամ յիշողութեան մէջ պահել: Բայց կայ երեւոյթ մը, որուն պիտի անդրադառնայ Առաքեալը: Հերաքրքրական է Պօղոս Առաքեալի մօտեցումը, նախ գնահատանքի արքայաչարութիւնը, որմէ յետոյ անցնելու նիւթին կամ հարցին, որպէսզի իրենց մտքերը պարտասպէտ գալիք յանդիմանութենէն չխտրուին համար: Նման այն համարներուն, որ կը կարդանք Յայտնութեան Յովհաննու գիրքին մէջ, այն եօթը նամակները գրուած եօթը եկեղեցիներուն. «**Գիտեմ գործերդ, վաստակդ եւ համբերութիւնդ, բայց...**» (2:1-4):

Անցնելով հարցին: Այսպէս հարցը գլուխի մասին է, անոր համար ալ կ'ըսէ. «**Կ'ուզեմ որ գիտնաք, թէ ռեւէ այր մարդու գլուխը Քրիստոս է, եւ կնոջ գլուխը՝ իր այրը, իսկ Քրիստոսի գլուխը՝ Աստուած**» (3 հմր): Նախ հարցը դիտենք իր շրջագիծին մէջ, ու մանաւանդ անցեալի մտայնութեան համաձայն: Հրեական ու հռոմէական սովորութեան համաձայն այր եւ կին գոց գլուխներով աղօթքի կը կազմէին, իսկ յունական սովորութեան համաձայն՝ բաց գլխով: Միւս կողմէ, գլուխ բացապարտին ըսելով նաեւ կը նշանակէ անկէ սկիզբ առած: Օրինակ, փարեզուիս, ամսագլուխ, որ կը նշանակէ Յունուար ամիսը կը կոչուի նաեւ փարեզուիս, որմէ սկիզբ կ'առնեն կամ պիտի առնեն միւս ամիսները: Այսպէս Պօղոս Առաքեալ ցոյց կու տայ, թէ այր մարդու գլուխը Քրիստոսն է, այսինքն՝ Քրիստոսն սկիզբ առած է, իսկ կինը՝ այր մարդէն, ինչպէս կը ներկայացնէ Ծննդոց գիրքը, ըսելով՝ «Աստուած փեսանելով որ Ադամ առանձին էր, իրեն օգնական մը փոխաւ իր կողմի ոսկորէն»: Իսկ Քրիստոսի պարագային գլուխը Հայրն Աստուած ինքն է, որմէ ծնունդ կ'առնէ Որդին: Գլուխ ըսելով նաեւ կը նշանակէ ենթակայութիւն: Այր մարդը ենթակայ է Քրիստոսի, իսկ կինը ենթակայ է Քրիստոսի այր մարդուն ենթակայ ըլլալովը: Այսպէս ստորադասութեան հարց չկայ: Ընդհակառակը ստորադաս էր կինը, սակայն Քրիստոսով վերագրուաւ այն փեղը, որ կորսնցուցած էր մեղքի պարճառով: Բայց կայ նրբութիւն մը, որուն կ'ուզէ հրաւիրել Պօղոս Առաքեալ, որպէսզի Կորնթացիները ըստ այնմ կողմնորոշուին:

«**Ուեւէ մարդ երբ աղօթած կամ մարգարեական պատգամախօսութիւն ըրած ատեն իր գլուխը ծածկուած կը պահէ, իր գլուխը՝ այսինքն Քրիստոսը անպարտած կ'ըլլայ**» (4 հմր):

«**Ուեւէ կին երբ բաց գլուխով կ'աղօթէ կամ մարգարեական պատգամախօսութիւն կ'ընէ, իր գլուխը՝ այսինքն իր ամուսինը անպարտած կ'ըլլայ, որովհետեւ ռեւէ փարբերութիւն չ'ունենար անպարտի կնոջմէ մը, որուն մազերը կը կտրեն**» (5 հմր):

Խորքին մէջ աղօթքի ժամանակ այր մարդը միշտ պէտք է այնպէս կանգնի որուն գլուխը Քրիստոս է, եւ իբրեւ այդպիսին պէտք է գլուխը բաց կանգնի աղօթքի: Իսկ կնոջ պարագային, ամուսինը իր գլուխնէ, այնպէս ինչպէս մէկ այլ ուրիշ առիթով Առաքեալը պիտի ըսէ. «որովհետեւ ամուսին մը իր կնայ զգլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցիին, իր մարմինին, որուն Փրկիչն է ինք» (Եփես 5:23):

«**Եթէ կին մը քողով չի ծածկեր իր գլուխը, թող կտրէ իր մազերը՝ ի նշան անպարտութեան. իսկ եթէ կնոջ համար նախապիսն է մազերը կտրելը կամ ածիլելը, թող քողով ծածկուի**» (6 հմր): Այսպէս Առաքեալը օրինակ կը բերէ իր ժամանակի մտայնութեան, երբ կնոջ մը մազերը կը կտրեն կամ կ'ածիլեն, որպէս նախապիսնի կամ անպարտութեան նշան:

«Այր մարդը Աստուծոյ պարկերը եւ փառքը ըլլալով՝ պէտք չէ իր գլուխը ծածկէ, իսկ կինը իր ամուսինին փառքն է» (7 հմբ):

«Ռրովհետեւ մարդը կնոջմէ սկիզբ չէ առած, այլ՝ կինն է որ սկիզբ առած է մարդէն: Մարդը չէր որ կնոջ համար ստեղծուեցաւ, այլ կինը՝ մարդուն համար» (8-9 հմբ): Այսպէղ Պօղոս Առաքեալ համեմատութիւն մը կ'ընէ Ծննդոց գիրքի ստեղծագործութեան դրուագէն, ուր կը ներկայացնէ, թէ ինչպէս Աստուած փեսաւ որ Ադամ առանձին է, ըսաւ. «Ադամին համար օգնական մը փամ»:

«Ահա թէ ինչու՝ կին մը պէտք է աղօթքի արեւն քողով ծածկէ իր գլուխը, ճիշդ ինչպէս հրեշտակները իրենց դէմքերը կը ծածկեն Աստուծոյ ներկայութեան» (10 հմբ): Այնպէս ինչպէս մարգարէին փեսային մէջ հրեշտակները իրենց երեսը կը ծածկէին Աստուծոյ ներկայութեան, նոյնպէս ալ կիները իրենց գլուխը ծածկելու Աստուծոյ ներկայութեան:

«Քրիստոնէական հասկացողութեամբ՝ չկայ կին առանց մարդու, ոչ ալ մարդ՝ առանց կնոջ: Ռրովհետեւ եթէ կինը այր մարդէն սկիզբ առած է, մարդն ալ կնոջմէ կը ծնի, եւ բոլորն ալ Աստուծոյ կան» (11-12 հմբ): Այս հարուածով Պօղոս Առաքեալ կու գայ ցոյց փալու քրիստոնէական ըմբռնումը, թէ որքան ալ կինը մարդէն յառաջ եկած է, բայց երկուքն ալ իրարմով կան, ու մանաւանդ՝ երկուքը Աստուծոյմով կան:

Առաքեալը գիրենք նկատելով որպէս հասուն մարդիկ, իրենց ուղղելով խօսքը ու մանաւանդ՝ ուղիղ եւ առողջ դատողութիւնը, օրինակը վերցնելով բնութենէն, կ'ըսէ. «**Դուք դատեցէք, թէ արդեօք պարզա՞ն է որ կին մը բաց գլուխով Աստուծոյ դիմաց աղօթքի կանգնի: Բնութիւնը ինք ձեզի չի՞ սորվեցներ՝ թէ այր մարդուն համար երկար մազ ունենալը անարգանք է, մինչդեռ կնոջ համար երկար մազերը փառք են, քանի Աստուած ծածկոցի փոխարէն փութած է զանոնք**» (13-15 հմբ):

Ի վերջոյ, կ'եզրակացնէ ըսելով, «**Եթէ մէկը դարձեալ ուզէ առարկութիւն ընել այս մասին՝ մենք միայն կ'ըսենք.- Ո՛չ մենք, ո՛չ ալ Աստուծոյ եկեղեցիները՝ ուրիշ սովորութիւն չենք ճանչնար**» (16 հմբ): Ռրովհետեւ վերջ ի վերջոյ, ամբողջ խնդիրը կը կայանայ ոչ թէ քօղարկուելուն կամ չքօղարկուելուն մէջ, այլ՝ զԱստուած պաշտելու պարզա՞ն կամ անպարզա՞ն կերպին մէջ: Իբրեւ Քրիստոսի եկեղեցի, պէտք է գիրնայ փարբերութիւնը զԱստուած պաշտելու վայելուչ կերպով: Եթէ երբեք ոգեղէն էակները իրենք Աստուծոյ ներկայութեան իրենց դէմքը կը ծածկեն, որքան մարդ արարածը հակառակ անոր որ Աստուծոյ պարկերով ու նմանութեան ստեղծուած է, բայց իմանայ վայելուչ կերպով Աստուծոյ ներկայութեան կանգնիլ: Ռրպէսզի Աստուծոյ ծառայութեան նուիրուած մարդը պարկեշտութեամբ ծառայէ, ու մանաւանդ՝ որեւէ մէկուն գայթակղութեան պարճառ չըլլայ: